

Եւ Թուրքիան — Հիւանդ Մարգը — կը ցնծար ու կը շարունակէր իր ախտաւոր գոյութիւնը, յենուած արեւմտեան իր հօր պաշտպաններու վրայ: Իրօք, ամէնքը կ'ուզէին անոր յօշոտումը, բայց սրովհետեւ իւրաքանչիւրը կը ձգտէր ամենէն համեղ սրտառն ունենալ, սրովհետեւ բաժանումի գործողութիւնը պիտի տեղի տար արտօթակներու խօլական բռնկումի մը, ընդհարումներու եւ արիւնահեղութիւններու, ուստի անվերջ կը ձգձգուէր «Հիւանդի» մահուան ժամը...

Եւ այնուամենայնիւ, սուլթաններու կայսրութիւնը կը հալուէր աստիճանաբար, կը դրկուէր իր եւրոպական ու ասիական նահանգներէն: Ի՞նչ զգրգալից անկումներ Սուլթան Մեծի օրերէն ի վեր...

Ոչինչ չէր փրկեր Հիւանդը — չէին փրկեր եւ Թանգիմաթներն ու Հատար Շէրիֆները:

Արդէն իսկ 1844 թուականին, Ռուսաստանը (Նիկոլա Ա.) կ'առաջարկէր Անգլիոյ՝ բաժնել Թիւրքիան երկու մեծագոյն շահագրքողուած պետութիւններու միջեւ: Ի՞նչ փառաւոր դարազուլս պիտի բացուէր Արեւելքի արտասուալից պատմութեան մէջ: Ո՞րպիսի թանկագին վաստակ՝ համաշխարհային քաղաքակրթութեան համար... Վիրահատի փրկարար դանակով վերցնել մէջտեղէն հինաւորց փրատախտ մը, որ կ'ապակահէր անագին տարածութիւններ եւ որ ազադային արեան անվերջ հեղեղներ պիտի ժայթքէր իր սճրանիւթ գոյութեան անդունդներէն...

Հրէշաւոր պատուհաս մըն է դիւանագիտութիւնը, անզամ ամենէն ազատասէր եւ քաղաքակիրթ պետութեան դիւանագիտութիւնը...

Վասն զի Անգլիան էր, որ ընդդիմացաւ այդ փրկարար անզամահատութեան:

Անգլիան մերժեց Ռուսաստանի առաջարկը եւ ուշի ուշով սկսեց հետեւիլ անոր շարժումներուն: Եւ երբ տեսաւ որ ցարը յայտնապէս կը քաջալերէր Մօլտավ-Վարախիայի այժմեան Ռուսաստանի) ազատագրական շարժումները, 1848 թուականէն ի վեր, երբ տեսաւ, որ Հիւսիսի «Մառցակոյտը», դանդաղ ու յամառ, Բալկաններու վրայէն կը

սահէր դէպի երազական «Ճարգրաղը», դէպի Բօսֆօր ու Միջերկրական, — նա նիւթեց Ղըրիմի արհաւիրաց պատերազմը, ուր Ռուսիոյ զինուորական սթըր խորտակուեց անզլօ-Փըրանսական միացեալ նաւատորմի զրոհին տակ: Եւ Մօսկօվի անագին կայսրութիւնը ոտով ձեռքով շղթայուեցաւ Սեւ ծովի եզերքին, առանց շարժուելու հնարաւորութեան: Պարիզի անարդ դաշնագրով (1856) նուիրագործուեցաւ «օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը» — եւ այդ անարդ սիրագործութեան հեղինակներն էին երկու մեծ երկիրներ, որ արեւմտեան քաղաքակրթութեան պարճանքն էին...

Բայց անա կը հասնի 1870 թուականը: Մէկը կը այդ տխուր հեղինակներէն, Ֆրանսան, պատերազմի կը բռնուի Գերմանիոյ հետ: Ռուսը, օգտուելով ընդհանուր չիտիքէն, վերստին զըլուխ կը բարձրացնէ: «Մառցակոյտը» կարճատեւ դադարէ յետոյ, կը շարունակէ իր վարէջըր դէպի Բալկանները եւ դէպի Բօսֆօր:

Ղըրիմի ցաւազին պարտութենէն յետոյ Ռուսաստանը սթախուեր էր իր դարաւոր մըրափէն, զարկ տուեր էր ներքին շարք մը բարենորոգումներու — ցար Ալեքսանդր Բ.ի օրով — զարթեցրեր էր եւ կեանքի ու զործի մղեր ներքին սթեքըր, վերակազմեր զօրք ու նաւատորմ եւ 15 տարուան ընթացքին զգալի յառաջդիմութիւն րբեր էր անտեսական ու կուլտուրական ասպարէզի վրայ:

Նոյն այդ ժամանակները հրապարակ կուգայ խոշոր վարչապետ մը — իշխան Գօրչակով: Ձեռներէջ ու յանդուզն, մեծ ծրագրիներով տարուած, մեծ փառքերու հետամուտ: Տեսակ մը ուսսական Բիսմարկի դափնինները: Ան ուղեց յաւերժացնել ինքզինքը մեծ զործով մը: Համոզուած համալայլօմակակ մը (պանսլայլիստ) — ան կը ծրագրէր ազատել բազմաթիւ ցեղակից ժողովուրդները եւ համախմբել զանոնք Մայր-Ռուսաստանի շուրջը, որ այնուհետեւ պիտի դառնար Եւրոպայի առաջին, ամենահօգր պետութիւնը:

Ունէր զեղեցիկ պատրուակ մը. — ազգայնութեան սկզբունքը (Principe de nationalite), որ այն ատենները խիստ «մօտա» էր, նուիրագործուած շարք մը երկիրներում, պատերազ-